Փոխի՛ր կանոնները

Նպատակ

Ֆուտբոլի միջոցով նպաստել Կոտայքի մարզի երիտասարդ աղջիկների անկախության ու ինքնավստահության բարձրացմանը:

Գործողություններ

- 2018 թ. Կոտայքի մարզում ստեղծել աղջիկների ֆուտբոլային լիգա
- Կոտայքի մարզի հինգ համայնքներում կազմակերպել «Հասարակական ազդեցություն սպորտի միջոցով» վերապատրաստման դասընթացներ, որոնց նպատակն է նպաստել երիտասարդ աղջիկների առաջնորդության հմտությունների բարձրացմանը:
- Սպորտի միջոցով փոխել հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ պատկերացումները

Ծրագրի նկարագրությունը

Հայ աղջիկների առաջնորդությունը ֆուտբոլում /այսուհետ՝ ՀԱԱՖ/ հիմնադրվել է 2015 թ.-ին, այն բանից հետո, երբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան, պատճառաբանելով բյուջեի կրճատումները, դադարեցրեց կանանց ազգային հավաքականի ֆինանսավորումը: Կարճ ժամանակաընթացքում ՀԱԱՖ-ը կամավորների օգնությամբ Գորիսում մեկնարկեց Հայաստանում առաջին աղջիկների ֆուտբոլային լիգան, այնուհետև լիգաներ ստեղծվեցին Ալավերդիում, Դիլիջանում եւ Եղեգնաձորում, որոնք ընդգրկում են ընդհանուր առմամբ 284 աղջիկ:

2018 թ-ի ՀԱԱՖ-ը նախատեսում է Կոտայքի մարզում մեկնարկել աղջիկների ֆուտբոլի մրցաշար: Հաշվի առնելով աղջիկների համար սպորտի և հասարակության մեջ ինտեգրվելու հարմարությունների ու հնարավորությունների սղությունը, ՀԱԱՖ -ը աշխատելու է երիտասարդ աղջիկների հետ՝ նպատակ ունենալով սպորտի միջոցով փոխել կնոջ դերի վերաբերյալ պատկերացումները հասարակության մեջ:

Մրցաշարից առաջ, «Հասարակական ազդեցություն սպորտի միջոցով» թեմայով երկու մեկօրյա դասընթացներ կանցկացվեն, որոնք կներառեն 30 տեղական մարզիչներ, ՀԿ-ների անդամներ, ֆիզիկական դաստիարակության ուսուցիչներ, ինչպես նաև 30 երիտասարդներ աղջիկների (12-15 տ.): Այս դասընթացի արդյունքում շուրջ 60 երիտասարդ ծրագրի միջոցով կստանան թիմային աշխատանքի, առաջնորդության, հանդուրժողականության ու գենդերային հավասարության վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ:

Ամռանը Կոտայք մարզի 5 համայնքների 14-16 տարեկան աղջիկների համար կանցկացվի առաջնորդության ամառային ճամբար, որը կտևի 3 օր և կընդգրկի ֆուտբոլի տեխնիկական վարժություններ, դասընթացներ առաջնորդության, մարդու իրավունքների, հավասարությանը և քաղաքացիական ակտիվության մասին:

Ճամբարի և դասընթացների արդյունքում կընտրվեն 1 տեղական համակարգող և 5 մարզիչ, ովքեր մեկամյա պայմանագիր կնքելուց հետո թիմեր կկազմեն իրենց համայնքներում, որոնք բաղկացած կլինեն 9-15 աղջիկներից (12-17 տ.): Առաջին մրցաշարային մրցաշրջանը կմեկնարկի 2018 թ սեպտեմբեր-հոկտեմբերի ամիսներին:

Այս ծրագիրը միայն ֆուտբոլ խաղալու մասին չէ: Այն ոչ միայն առողջ ապրելակերպի հնարավորություն է ընձեռում, այլ նաև զարգացնում է որոշումներ կայացնելու և առաջնորդ լինելու հմտությունները՝ աղջիկներին տալով ինքնավստահություն և ձայնի իրավունքի գիտակցում:

Ծրագիրն իր երկարաժամկետ ազդեցությունը կունենա Կոտայքի շուրջ 300 երիտասարդների, ծնողների և մարզիչների վրա:

Միացե՛ք մեզ և Այո՛ ասե՛ք Հայաստնի ուժեղ և անկախ կանանց նոր սերնդին:

Բյուջե

Մրցաշար (Աշուն)

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Դարպասապահի ձեռնոցներ	5	3,000	15,000	$30.74
Մարզահագուստի բրենդավորում	60	650	39,000	$79.91
Գուլպաներ	60	1,200	72,000	$147.53
Ժիլետ	50	1,100	55,000	$112.70
Մրցաշարի մարզահագուստ	60	4,500	270,000	$553.23
Պայմանագրի տպագրություն	100	60	6,000	$12.29
Առաջին օգնության արկղ	5	5,000	25,000	$51.23
Կոն	50	200	10,000	$20.49
Սուլիչ	5	700	3,500	$7.17
M&E հարցման տպագրություն	130	30	3,900	$7.99
Վկայագիր	80	65	5,200	$10.65
Գավաթ	1	10,000	10,000	$20.49
Փակման արարողության մեդալ	42	1,200	50,400	$103.27
Աշխատակազմի այցելություններ	2	20,000	40,000	$81.96
Բացման արարողության նախուտեստներ	1	30,000	30,000	$61.47
Փակման արարողության սնունդ	1	30,000	30,000	$61.47
Փոխադրամիջոց 4 թիմի համար	10	70,000	700,000	$1,434.30
Մարզչական շապիկ	5	4,500	22,500	$46.10

Տարածաշրջանային մրցաշար

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Փոխադրում Արթիկ	1	45,000	45,000	$92.21
Աշխատակազմի փոխադրում	2	10,000	20,000	$40.98
Գավաթ	1	10,000	10,000	$20.49
Մեդալ	30	1,200	36,000	$73.76
Լանչ	50	1,500	75,000	$153.68
Ջուր	4	500	2,000	$4.10
Մարզակոշիկ	15	8,000	120,000	$245.88

Ուսուցում

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Լանչ	2	30,000	60,000	$122.94
Անձնակազմի փոխադրում	2	20,000	40,000	$81.96
Նյութերի տպագրություն	10	130	1,300	$2.66

Ամառային ճամբար

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Լանչ	175	1,500	262,500	$537.86
Սուրճի ընդմիջումներ	3	10,000	30,000	$61.47
Տպագրություն	80	20	1,600	$3.28
Տպագրական նյութեր	10	250	2,500	$5.12
Ճամբարի անդամներ փոխադրում	9	13,000	117,000	$239.73
Գրատախտակ	1	3,200	3,200	$6.56
Մարկեր	5	1,000	5,000	$10.25
Գրիչ	40	100	4,000	$8.20
Ամառային ճամբարի անձնակազմի ուղևորություն	2	25,000	50,000	$102.45
Հրավիրված դասավանդողների փոխադրում	2	4,000	8,000	$16.39
Գիշերակաց անձնակազմի համար	4	50,000	200,000	$409.80
Սնունդ ամառային ճամբարի անձնակազմի համար	15	1,500	22,500	$46.10
Արևապաշտպան քսուկ	5	4,000	20,000	$40.98
Օպերատոր	1	60,000	60,000	$122.94
Վկայագիր	55	65	3,575	$7.33
Ջուր	9	500	4,500	$9.22

Դպրոցական ակուբներ

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Ձեռնարկի տպագրություն	1	4,830	14,490	$29.69
Գրենական պարագաներ	2	200	6,000	$12.29
Վկայագիր	1	65	4,095	$8.39
Մեդալներ	30	1,200	36,000	$73.76
Գնդակ	50	8,000	96,000	$196.70
Բանկային վճարներ (ընդհանուրի 2% -ը)	4	54,955	54,955	$112.60
Փոխադրամիջոց Երևանից*	15	15,000	60,000	$122.00

**Քանի որ մասնակիցների մեծ մասը խոցելի գյուղական համայնքներից են, ծրագիրը նախատեսում է իրենց տեղափոխման և սննդի հետ կապված բոլոր ծախսերը՝ համոզված լինելով՝ բոլոր աղջիկները ունեն ծրագրին մասնակցելու հավասար հնարավորություններ:*

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 488 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$5865.99**